ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ Ու Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1115-Ա « 22 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի
Հ. 5451-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ալբերտ Մելիքյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 29-ի հ.5451-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու համար:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 ենթակետով և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-28996-24 եզրակացությունը.

1.Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքի Ներքին Չարբախի 5-րդ փողոցի հ.3 հասցեում գտնվող տնամերձ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով հատկացված հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու և տնամերձ հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ Ալբերտ Մելիքյանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» հ.5451-Ա որոշման նախաբանում և 1-ին կետում «1899.03քմ» բառերը փոխարինել «հ.1842.80քմ» բառերով:

2.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված 1842.80քմ մակերեսով հողամասի հատակագծով, չեղյալ համարելով նախկինում թողարկված հ.275-2023 հատակագիծը:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղա-

շինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ